ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրաւէրով, Սեպտեմբերի 26–ին, Շաբաթ օր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեանը:

Սրբազան Պատրիարքին ուղեկցում էր Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Դիւանապետ Հոգեշնորհ Տ. Շահէ Վարդապետ Անէմեանը:

Նորին Ս. Օծութիւն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում եղբայրական սիրով դիմաւորեց Սրբազան Պատրիարքին և ջերմօրէն ողջունեց Նորին Ամենապատուութեան սոյն պատմական այցելութիւնը:

Ազգիս Վեհափառ Հայրապետը և Երուսաղէմի Հայոց Սրբազան Պատրիարքը Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ վերանորոգեցին իրենց միասնութեան ուխտը և միատեղ աղօթեցին Հայ Եկեղեցու հաստատութեան և աշխարհի խաղաղութեան համար:

Նորին Ամենապատուութիւնը հանդիսաւոր Սուրբ Պատարագ մատուցեց և քարոզեց Մայր Տաճարում Հոկտեմբերի 4–ին, Վեհափառ Հայրապետի Գահակալութեան 9–րդ տարեդարձի առթիւ:

Սրբազան Պատրիարքը այցելեց Մայր Տաճարը, Հոգեւոր Ճեմարանը, Տպարանը, Ս. Հռիփսիմէի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդի, Ս. Խոր Վիրապի, Սեւանի, Մուղնու Ս. Գէորգ, Հառիճայ և Մարմաշէնի վանքերը, Սաղմոսավանքը, Յովհաննավանքը, ինչպէս նաեւ Երեւանի, Թալիշի և Լենինականի Եկեղեցիները:

Սրբազան Պատրիարքը ուխտի գնաց Օշական՝ Ս. Մեսրոպի դամբարանը, այցելեց Մեսրոպ Մաշտոցի անուան Երեւանի Մատենադարանը և պատմական Թանգարանը:

Հայկական ՍՍՌ Գերագոյն Սովետի նախագահութեան նախագահ Դոկտ.–Պրոֆ. Ն. Յարութիւնեանը Սեպտ.ի 30–ին, Հորեքշաբթի, ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Երուսաղէմի Հայոց Ամեն. Տ. Եղիշէ Սրբազան Պատրիարքին: Ընդունելութեան ընթացքում տեղի ունեցաւ բարեկամական սիրալիր զրոյց:

Նորին Ամենապատուութիւնը Հոկտեմբերի 12–ին հրաժեշտ առաւ Մայր Աթոռից լաւագոյն տպաւորութիւններով:

Հոկտեմբերի 12–ին, Երկուշաբթի, Վեհափառ Հայրապետը և Սրբազան Պատրիարք Հայրը մեկնեցին Մոսկուա իրենց շքախմբերով:

Հոկտեմբերի 14–ին, Մոսկուայում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Երուսաղէմի Հայոց Սրբազան Պատրիարքը այցելեցին Մոսկուայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբութիւն Ալեքսիին և ներկայ եղան Զագորսկի աստուածաբանական Ճեմարանի 150–ամեակի հանդիսութեանց:

Սրբազան Պատրիարք Հայրը Հոկտեմբերի 15–ին մեկնեց Երուսաղէմ:

Ս. Էջմիածին, 22 Հոկտեմբերի 1964 ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

digitised by A.R.A.R.@